ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022թ. N 221-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գայանե Գրիգորյանի հայտը (մտից՝ N 5, 2022 թվականի հունվարի 4) ***որոշում եմ՝***

1. Գայանե Գրիգորյանին 2022 թվականի ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակի N 12/1 հասցեում գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 126):

2. Գայանե Գրիգորյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 և 900365031351 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 7 500-ական (յոթ հազար հինգ հարյուրական) դրամ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարված լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 օգոստոսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022թ. N 222-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉ ՏԻԳՐԱՆ ԱՐՄԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-135-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ և 37-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման դրույթներին համապատասխան՝ ***որոշում եմ՝***

1. Հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Անուշ Ֆելիքսի Բաղրյանի (հաշվառումը՝ ԼՂՀ, Մարտունու շրջան, գյուղ Ճարտար) դիմումը (մտից՝2022 թվականի հուլիսի 27-ի N 1168), Միասնական Սոցիալական Ծառայության Ջերմուկի տարածքային կենտրոնի եզրակացությունը (մտից՝ 2022 թվականի օգոստոսի 10-ի N 1257) և Ջերմուկ համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 9-ի թիվ 7 արձանագրությանը կից եզրակացությունը՝ Ջերմուկ քաղաքի անչափահաս բնակիչ Տիգրան Արմենի Հարությունյանի (ծնված՝ 2011 թվականի փետրվարի 3-ին) նկատմամբ սահմանել խնամակալություն՝ հաշվի առնելով նրա՝ առանց ծնողական խնամքի մնալու փաստը:

2. Տիգրան Արմենի Հարությունյանի խնամակալ նշանակել մորաքրոջը՝ Անուշ Ֆելիքսի Բաղրյանին (ծնված 21.03.1991 թ.):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անուշ Ֆելիքսի Բաղրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 օգոստոսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022թ. N 223-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 5-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արթուր Մկրտչյանի հայտը (մտից՝ N 5, 2022 թվականի հունվարի 4) ***որոշում եմ՝***

1. Արթուր Մկրտչյանին 2022 թվականի ընթացքում տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 127):

2. Արթուր Մկրտչյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 և 900365031351 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 3000-ական (երեք հազարական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարված լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 օգոստոսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022թ. N 224-Ա

ՄՈՒՇԵՂ ԱՐԱՅԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի, 275-283-րդ, 219.[1]-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հաշվի առնելով ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկ բաժնի պետի՝ 2022 թվականի հունիսի 28-ի N 84/1141 գրությունը և գրությամբ ներկայացված փաստական տվյալները, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքում իրավախախտումների վերաբերյալ վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 11-ի N 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ՝***

1. Առանց թույլտվության հանրային սննդի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում իրականացնելու, առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպման և իրացման համար Ջերմուկ քաղաքի բնակիչ Մուշեղ Արայի Սողոմոնյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նշանակել վարչական տուգանք՝ 100 000 (հարյուր հազար) դրամի չափով, նույն հոդվածի 7-րդ մասի հատկանիշներով՝ 80 000 (ութսուն հազար) դրամի չափով:

2. Մուշեղ Արայի Սողոմոնյանը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Ջերմուկի համայնքապետարանի 900365031187 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել իրավախախտումների վերաբերյալ վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովին:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մուշեղ Արայի Սողոմոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 օգոստոսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022թ. N 225-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն աորոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանի հայտը (մտից՝ N 5, 2022 թվականի հունվարի 4) ***որոշում եմ՝***

1. Հարություն Հովհաննիսյանին 2022 թվականի ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոց 22/1 հասցեում գտնվող ռեստորանում ոգելից, ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 122):

2. Հարություն Հովհաննիսյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 18 750-ական (տասնութ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարված լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 օգոստոսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022թ. N 226-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Արտեմ Դոլուխանի Հայրապետյանի դիմումը (մտից՝ N 1262, 11.08.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Դոլուխան, Դուխիկ, Արտեմ Հայրապետյաններին և Էվելինա Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող բնակելի տանը՝ 0,1353 հա մակերեսով բնակավայրերի նշանակության տնամերձ (բնակելի կառուցապատման) հողամասով (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-016-007), տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 5-րդ փողոց, 9-րդ փակուղի N 3:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. օգոստոսի 11
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2022թ. N 227-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՐԳԻՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմամբ հաստատված կարգի N 1 հավելվածի դրույթներով, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Սարգիս Վիտուշի Հակոբջանյանի դիմումը (մտից N 1259, 10.08.2022 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Թույլատրել Ջերմուկ քաղաքի բնակիչ Սարգիս Վիտուշի Հակոբջանյանին փոխելու սեփական հասարակական նշանակության անշարժ գույքի՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի 19-րդ շենքի N 41 հասցեում գտնվող տարածքի (հիմք՝ սեփականության իրավունքի N 1997695 վկայական), գործառնական նշանակությունը որպես բնակելիի՝ բնակարան, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի գործառական նշանակությունը բնակելիի փոփոխելուց հետո այն ընդգրկել Ջերմուկ համայնքի բնակարանային ֆոնդում:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սարգիս Վիտուշի Հակոբջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 օգոստոսի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2022թ. N 228-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 204-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, հաշվի առնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ ս/թ օգոստոսի 8-ի N 01 /16.1/5260-2022 գրությունը՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 2-ի «Ջերմուկ համայնքի անչափահաս բնակիչ էլեն Վաչիկի Ավագյանի նկատմամբ հոգաբարձություն սահմանելու և հոգաբարձու նշանակելու մասին» N 204-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝ որոշման 1-ին կետում «N 1208)» թվից հետո ավելացնել *«, Միասնական Սոցիալական Ծառայության Ջերմուկի տարածքային կենտրոնի ս/թ օգոստոսի 2-ի եզրակացությունը (մտից՝ 2022 թվականի օգոստոսի 10-ի N 1258)»* բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 օգոստոսի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2022թ. N 229-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Վահագն Արշակի Հարությունյանի դիմումները (մտից N 187՝ 27.01.2021 թ. և N 1240՝ 05.08.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի օգոստոսի 3-ի N 03082022-10-0028 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 5-րդ փողոցի N 10 հասցեում գտնվող 37,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 33,2 քմ) ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 37,3 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Վահագն Արշակի Հարությունյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Վահագն Արշակի Հարությունյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝41050 (քառասունմեկ հազար հիսուն) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝30250 (երեսուն հազար երկու հարյուր հիսուն) դրամ՝ հողամասի գինը:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վահագն Արշակի Հարությունյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահագն Արշակի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 օգոստոսի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2022թ. N 230-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ N 12/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Շահեն Վաղարշակի Ենոքյանի դիմումները (մտից N 185՝ 27.01.2021 թ. և N 1241՝ 05.08.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի օգոստոսի 3-ի N 03082022-10-0023 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 12/2 հասցեում գտնվող 27,6 քառակուսի մետր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 25,3 քմ) ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 27,6 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Շահեն Վաղարշակի Ենոքյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).
   2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Շահեն Վաղարշակի Ենոքյանը պարտավոր է վճարել՝
   1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝30360 (երեսուն հազար երեք հարյուր վաթսուն) դրամ՝ ավտոտնակի գինը.
   2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝22400 (քսաներկու հազար չորս հարյուր) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Շահեն Վաղարշակի Ենոքյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շահեն Վաղարշակի Ենոքյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 օգոստոսի 12
Ջերմուկ